

## Ծածկագիր

12-2-ՔՅ4-Մ3-5

## Պաշտոնի Անվանում

Ավագ հաշվառող

## Պաշտոնի Ամբողջական Անվանում

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ | Կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժին | Ավագ հաշվառող

## Անմիջական Ղեկավարի Պաշտոն (Օգտագործվում է վերապատրաստման հատվածում)

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ | Կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժին | Բաժնի պետ

## Ենթակա և հաշվետու է

Ավագ հաշվառողն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

## Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ հաշվառողի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ հաշվառողը:

## Աշխատավայր

Հայաստան, Կոտայքի մարզ, ք.Յրազդան 2301:

## Աշխատանքի բնույթը (գործառնություններ)

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. իրականացնում է Հիմնարկի՝ ըստ ՀՀ քր. օր-ի հոդվածների դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների կազմումը.
2. հաշվառում է Հիմնարկի դատապարտյալների դիմումները, նրանց վերաբերյալ միջնորդությունները և ապահովում ընթացքը.
3. իրականացնում է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության փաստաթղթերի համապատասխան իրազեկման աշխատանքների կանոնակարգման գործընթացը.
4. իրականացնում է ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի հետ տեղեկատվություն ստանալու աշխատանքները,
5. հաշվառում է Հայաստանի Հանրապետությունում պատիժ կրող և պահվող օտարերկրյա քաղաքացի հանդիսացող անձանց վերաբերյալ տվյալները.
6. հաշվառում է Հիմնարկից պայմանական վաղաժամկետ և խափանման միջոցի փոփոխման արդյունքում ազատված անձանց վերաբերյալ տվյալները.
7. իրականացնում է ոչնչացման ենթակա գրագրությունների ցուցակի կազմման աշխատանքները.
8. իրականացնում է կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ տեղեկանքների կազմումը

## Իրավունքները

1. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, հիմնավորումներ, պարզաբանումներ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ.
2. Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ կալանավորված անձանց և դատապարտյալների մասին տվյալների կազմման աշխատանքների վերաբերյալ.
3. համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնակցել առաջարկված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներին.

## Պարտականությունները

1. քննության առնել և ընթացք տալ կազմակերպություններից, այլ գերատեսչություններից, քաղաքացիներից և դատապարտյալներից ստացված առաջարկությունները, դիմումները և բողոքները.
2. կատարել հարցում ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի Էլեկտրոնային բազայի միջոցով՝ կալանավորված անձանց և դատապարտյալների վերաբերյալ նախկինում դատված լինելու մասին.
3. պատրաստել Հիմնարկի մեկուսացվածության աստիճանի փոփոխությունների՝ դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ.
4. պատրաստել Հիմնարկի կրկնահանգագործություն կատարած՝ դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ.
5. կազմել Հայաստանի Հանրապետությունում պատիժ կրող և պահվող օտարերկրյա քաղաքացի հանդիսացող անձանց վերաբերյալ տվյալներ, ցուցակներ.
6. Կազմել և ամփոփել Հիմնարկից պայմանական վաղաժամկետ և խափանման միջոցի փոփոխման արդյունքում ազատված անձանց ցուցակները.

## Կրթություն, որակավորման աստիճանը

**Ուղղություն:** ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

**Ոլորտ:** ԻՐԱՎՈՒՆՔ

**Ենթաոլորտ:** Իրավունք, Միջուլորտային մասնագիտություններ

**Մասնագիտություն:** 042101.00.6 Իրավագիտություն, 042101.00.7 Իրավագիտություն, Դատական փորձաքննություն

## Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

## Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի

կամ փաստադրժարության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

## Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

#### [Որոշումներ կայացնելու լիազորությունները](#)

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

#### [Գործունեության ազդեցությունը](#)

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

#### [Շփումները և ներկայացուցչությունը](#)

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

#### [Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը](#)

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

#### [Անհրաժեշտ կոմպետենցիաներ](#)

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարչություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում